ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«28» նոյեմբեր 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-113/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Վ.Վ.Վ-Գրուպ» ՍՊԸ-ի 22.11.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Վ.Վ.Վ-Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Վ.Վ.Վ-Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 22.11.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը 25.10.2016թ. մասնակցել է «ՀՀ ԿԱ Ո ՊԸԱՊՁԲ-ՀՀՀ/2016» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.11.2016թ. կայացրած որոշմամբ

Ընկերությանը ճանաչել է Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից և ծանուցել վերջինիս՝ առաջարկելով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգը 14.11.2016թ. չկայացած է հայտարարվել, ընդ որում Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ հայտարարության մեջ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար որպես հիմնավորում նշվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ Ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չկայացած է հայտարարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա, այն դեպքում, երբ 2-րդ չափաբաժնի համար հայտ է ներկայացրել չորս մասնակից:

Ընկերությունը նշել է, որ 16.11.2016թ. հայտարարվել է «ՀՀ ԿԱ Ո ՊԸԱՊՁԲ-ՀՀՀՁ/2» ծածկագրով ընթացակարգ՝ «ՀՀ ԿԱ Ո ՊԸԱՊՁԲ-ՀՀՀ/2016» ծածկագրով ընթացակարգի նույն բովանդակությամբ (բացառությամբ 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում մի քանի ավելացումներով, որտեղ ավելացել է ավազի արկղ, իսկ «հրշեջ վահանակ մետաղյա փեղկերով ապրանք» բառերի կողքին ավելացել է «10 հատ» բառերը): Պատվիրատուի կողմից պատճառաբանվել է, որ իրենց կողմից սխալ է թույլ տրվել հրավերի 1-ին չափաբաժնում, իսկ երկրորդ չափաբաժինը հրապարակվել է նույնությամբ:

Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 51-րդ կետը, այն է՝ 1-ին չափաբաժնի մասով տեխնիկական բնութագրերի հրավերի պահանջներին չհամապատասխանության դեպքում Ընկերությանը պետք է տրամադրվեր մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունը շտկելու համար:

Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով նշվում է, որ տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին և միևնույն ժամանակ հղում է կատարվել Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին (այն է՝ ոչ մի հայտ չի

ներկայացվել), այն դեպքում, երբ «Վ.Վ.Վ-Գրուպ» ՍՊԸ-ն հայտարարվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ըստ Ընկերության՝ խախտվել է նաև Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասը, համաձայն որի հրավերում փոփոխություն կարելի է կատարել միայն հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ:

Ընկերությունը նշել է նաև, որ Պատվիրատուն հայտերի բացման նիստի արձանագրությունը չի ուղարկել Ընկերությանը, այլ վերջինս տեղեկացվել է gnumner.am կայքի միջոցով:

Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է.

1. Կասեցնել ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից 16.11.2016թ. հայտարարված «ՀՀ ԿԱ Ո ՊԸԱՊՁԲ-ՀՀՀՁ/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հետագա գործընթացը:

2. Դադարեցնել 14.11.2016թ. «ՀՀ ԿԱ Ո ՊԸԱՊՁԲ-ՀՀՀՁ/» ծածկագրով պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ հայտարարությունը:

Ընկերությունը 25.11.2016թ. Կենտրոնին ուղղված գրությամբ խնդրել է առանց քննության թողնել 22.11.2016թ. ներկայացված բողոքը:

2. <u>ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

ՀՀ ԿԱ ոստիկանությունը 23.11.2016թ. թիվ 11/2844 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ԿԱ Ո ՊԸԱՊՁԲ-ՀՀՀ/2016» ծածկագրով պարզեցված ընթացակարգը 14.11.2016թ. ՀՀ ոստիկանության կողմից հայտարարվել է չկայացած՝ տեխնիկական բնութագրում առկա անճշտությունները շտկելու նպատակով, այդ իսկ պատճառով ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից 16.11.2016թ. հայտարարվել է «ՀՀ ԿԱ Ո ՊԸԱՊՁԲ-ՀՀՀՁ/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգը, որը կասեցնելու հիմքեր առկա չեն:

3. <u>ԳԲԽ-113/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, հիմք ընդունելով «Վ.Վ.Վ-Գրուպ» ՍՊԸ-ի 25.11.2016թ. Կենտրոնին ներկայացված՝ բողոքը առանց քննության թողնելու մասին դիմումը, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին

առաջարկում է «Վ.Վ.Վ-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 22.11.2016թ. Խորհրդին ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-113/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան